նականութեամբ ընդ միմեանց, վերջապէս այն, որ տեսի ես ընդ այլ յազգս և այն որ ճաշակեցի քաղցրութիւն 'ի տանէ և 'ի ընտանեացէ իմմէ ազգ ձեզ արարի, և 'ի վերայ ամենայն ասացածոց իմոց ամենայն բարեբարոյ բնութեանց տէր անձինք կարեն ճառել պատճառս բազմապատիկս բարութեանց, որ 'ի պատճառ կարճութենէ ժամանակի ես ոչ կարացի մանրամասնաբարն գրել թէ որքան բարութիւնք գոն 'ի կառավարութիւնս Օրինօք և կարգադրութեան, և այժմոյս աւարտ ասացելոց իմոց արարի և առաջացայ 'ի շարն յօրինաց, և յուսամ 'ի Տէր, զի տացէ զօրութիւն հոգոյ իմոյ զի շարեցից զայն ևս համայ համեմատ բնութեան մարդոյ ըստ հաճոյից բանական հոգոյ մերոյ և Տէրն յինքն միայն Օգնական բանիս և յառաջացանօղ միտս յազգին իմոյ ընթանալ առ 'ի գործ առ Տեառն խնդալ։

Եւ 'ի երկու պատճառէ ոչ կամէի յիշեցուցանել անուն շարադրօղիս նախ զի տգէտք մի հայհոյեսցեն, երկրորդ զի իմաստունք մի՛ փառաբանեսցեն, այլ 'ի պատճառն, որ ո՛չ կարէ լինիլ ոչինչ Շարադրութիւնք մինչ չիցէ ոմն Շարադրօղ, վասն այս մտածութեան շարադրօղն սորայ հարկիւ բացադրեցի յորպէս սկզբանադրութիւնն մի 'ի փոքրկանց որդոյ Հայոց 'ի յազգէն Թորգոմայ և 'ի տանէն Նախիջևանայ 'ի 42 երորդ աստիճան հիւսիսային կողմ յաշխարհէ 'ի յոստ